Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Պ-1053[1]-21.04.2025-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123.1-ին հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 123[1]. Տրանսպորտային միջոցների վրա լուսային կամ ձայնային, ներառյալ՝ հատուկ սարքավորումներ տեղադրելու կամ տրանսպորտային միջոցներում խլացուցիչներ կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ տեղադրելու կանոնները խախտելը**».

2) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Տրանսպորտային միջոցների վրա ստանդարտին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումներ կամ տրանսպորտային միջոցներում ստանդարտին չհամապատասխանող խլացուցիչներ կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ (բացառությամբ հակաառեւանգման ազդանշանային համակարգեր եւ հավաքների կամ հանրային միջոցառումների դեպքում՝ բարձրախոսներ) տեղադրելը կամ դրանք տեղադրված վիճակում վարելը կամ շարժման ընթացքում դրանք օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով և տուգանային միավորի կիրառում՝ երկու միավոր՝ ստանդարտներին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների, խլացուցիչների կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչների կամ բարձրախոսների բռնագրավմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Պ-1053[1]-21.04.2025-ՊԱ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~***Հոդված 1.*** «Վարչական Իրավախախտումների Վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123.1-ին հոդվածի 1-ին մասը մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.~~

~~«Տրանսպորտային միջոցների վրա ստանդարտին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումներ կամ խլացուցիչներ կամ նվազարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ (բացառությամբ հակաառեւանգման ազդանշանային համակարգի եւ հավաքների կամ հանրային միջոցառումների դեպքում՝ բարձրախոսների) տեղադրելը կամ շարժման ընթացքում դրանք օգտագործելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով՝ ստանդարտներին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների, խլացուցիչներ կամ նվազարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչների կամ բարձրախոսների բռնագրավմամբ, եւ տուգանային միավորի կիրառում՝ երկու միավոր:»:~~

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123.1-ին հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 123[1]. Տրանսպորտային միջոցների վրա լուսային կամ ձայնային, ներառյալ՝ հատուկ սարքավորումներ տեղադրելու կամ տրանսպորտային միջոցներում խլացուցիչներ կամ նվազարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ տեղադրելու կանոնները խախտելը**».

2) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Տրանսպորտային միջոցների վրա ստանդարտին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումներ կամ տրանսպորտային միջոցներում

ստանդարտին չհամապատասխանող խլացուցիչներ կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ (բացառությամբ հակաառեւանգման ազդանշանային համակարգեր եւ հավաքների կամ հանրային միջոցառումների դեպքում՝ բարձրախոսներ) տեղադրելը կամ դրանք տեղադրված վիճակում վարելը կամ շարժման ընթացքում դրանք օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով և տուգանային միավորի կիրառում՝ երկու միավոր՝ ստանդարտներին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների, խլացուցիչների կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչների կամ բարձրախոսների բռնագրավմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

(Պ-1053[1]-21.04.2025-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր և նախագծի 1-ին հոդված	Համաձայն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի՝ տրանսպորտային միջոցի վարորդին արգելվում է **տրանսպորտային միջոցներում** տեղադրել ստանդարտին չհամապատասխանող խլացուցիչներ կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ: Մինչդեռ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			պատասխանատվություն է նախատեսվում **տրանսպորտային միջոցների վրա** ստանդարտին չհամապատասխանող խլացուցիչներ կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ տեղադրելու համար: Ուստի, վերը նշված նախագծերի միջև հակասություններից խուսափելու և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանված արգելքը խախտած վարորդներին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերը հստակեցնելու համար առաջարկում ենք «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը համապատասխանեցնել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող իրավակարգավորումներին՝ նոր խմբագրությամբ շարադրելով օրենսգրքի 123[1]-ին հոդվածի վերնագիրը և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»		

			օրենքի նախագծի 1-ին հոդվածով օրենսգրքի 123[1]-ին հոդվածի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ վերը նշվածի հիման վրա նախագծում կատարվում է ոչ թե փոփոխություն, այլ՝ փոփոխություններ, առաջարկում ենք դա արտացոլել նաև նախագծի վերնագրում: Բացի այդ, անհրաժեշտ է նախագիծը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի պահանջներին, ինչպես նաև՝ շտկել տեխնիկական վրիպակները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք՝ 1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով, 2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 1.** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի		

			Հանրապետության օրենսգրքի 123.[1]-ին հոդվածի՝ 3) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 123[1]. Տրանսպորտային միջոցների վրա լուսային կամ ձայնային, ներառյալ՝ հատուկ սարքավորումներ տեղադրելու կամ տրանսպորտային միջոցներում խլացուցիչներ կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ տեղադրելու կանոնները խախտելը**», 4) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «1. Տրանսպորտային միջոցների վրա ստանդարտին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումներ կամ տրանսպորտային միջոցներում ստանդարտին չհամապատասխանող խլացուցիչներ կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ (բացառությամբ հակաառեւանգման ազդանշանային համակարգեր եւ հավաքների կամ հանրային միջոցառումների դեպքում՝ բարձրախոսներ) տեղադրելը կամ դրանք տեղադրված վիճակում վարելը կամ շարժման ընթացքում դրանք օգտագործելը՝		

			առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով և տուգանային միավորի կիրառում՝ երկու միավոր՝ ստանդարտներին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների, խլացուցիչների կամ նվագարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչների կամ բարձրախոսների բռնագրավմամբ:»»:		